



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

19.06.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/07

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ խորհուրդ)՝ քննելով «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ի 31.05.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/07 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 31.05.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպած «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/10-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՇՁԲ-7/31» ծածկագրով ընթացակարգը (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) կայացել է 2017 թվականի մարտի 23-ին, իսկ մայիսի 30-ին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հրապարակել է որոշման արդյունքները, որում մասնավորապես նշված է, որ «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ

ունի ժամկետանց հարկային պարտավորություններ և պարտավորությունները գերազանցում են ակտիվներին, որի հիման վրա Ընկերության հայտը մերժվել է:

Ընկերությունը բողոքով հայտնել է, որ «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել 21.03.2017թ. և տվյալ օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ոչ թե ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ, այլ ունեցել է 555 000 ՀՀ դրամ դեբետային մնացորդ (գերավճար), որին ի հավաստումն՝ Ընկերությունը բողոքին կից ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Մաշտոցի հարկային տեսչության կողմից 19.05.2017թ. տրված տեղեկանքը առ այն, որ Ընկերությունը 21.03.2017թ. դրությամբ ունի 555 000 ՀՀ դրամ դեբետային մնացորդ:

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, համաձայն որի հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընկերությունը բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-ԱՄ-2017/07 բողոքը քննող հասձնաժողովի 06.06.2016թ. ժամը 12:00-ին կայացած նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել իր ներկայությունը ով պնդել է 31.05.2017թ. բողոքով հայտնած դիրքորոշումը:

Նիստի ժամանակ ԳԲԽ-ԱՄ-2017/07 բողոքը քննող խորհրդի այն հարցին թե արդյոք Ընկերությունը վիճարկում է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Պատվիրատուին տրամադրված եզրակացությունը, ըստ որի՝ Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կազմել է՝ 91 557 850 ՀՀ դրամ, իսկ ակտիվների հաշվեկշռային արժեքը՝ 64 172 681 ՀՀ դրամ, ի պատասխան՝ Ընկերությունը հայտնել է, որ պարտավորությունների և ակտիվների մասով չի վիճարկում, քանի որ Ընկերությունում տեղի է ունեցել կանոնադրական կապիտալի ավելացում, սակայն դա Ընկերության

կողմից չի արձանագրվել Ընկերության շահութահարկի հաշվետվություններում, որը սակայն հնարավորության դեպքում կարող է շտկվել Ընկերության կողմից:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 06.06.2017թ. ժամը 12:30-ի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է 31.05.2017թ. բողոքով Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը 09.06.2016թ. թիվ ԴՎԱ/1756 գրությամբ ներկայացրել է «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/10-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՇՁԲ-7/31» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, այնուհետև, սահմանված կարգով, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացված՝ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև Կարգ) 48-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն՝ «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ի ակտիվները կազմել են՝ 64 172 681 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունները՝ 91 557 850 ՀՀ դրամ, այսինքն՝ հաշվետու տարվա ընթացքում Ընկերության պարտավորությունների հաշվեկշռային արժեքը գերազանցել է ակտիվների հաշվեկշռային արժեքը, ինչպես նաև Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ՝ 343 398 ՀՀ դրամի չափով:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված եզրակացությունը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով հոբիրդի 06.06.2017թ. ժամը 12:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է 09.06.2016թ. թիվ ԴՎԱ/1756 գրությամբ հոբիրդին հայտնած դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2017/07 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2017/07 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/10-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՇՁԲ-7/31» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/10-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՇՁԲ-7/31» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով **21.03.2016թ.** հայտ է ներկայացրել:

3. Ընկերությունը հայտի N 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ **հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

4. Ընկերությունը հայտի N 3.3 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ **հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:**

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.03.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի թվով 4 չափաբաժինների մասով:

6. Պատվիրատուն, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 13.04.2017թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ի վերաբերյալ:

7. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 19.04.2017թ. Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ **«Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (21.03.2017թ.) ունի ժամկետանց հարկային պարտավորություն 343 398 ՀՀ դրամի չափով և հայտը ներկայացնելուն նախորդող (2016թ.) հաշվեպու պարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կազմել է՝ 91 557 850 ՀՀ դրամ, իսկ ակտիվների հաշվեկշռային արժեքը՝ 64 172 681 ՀՀ դրամ:**

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված եզրակացությունը, 26.04.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1-րդ կետով կայացված որոշմամբ մերժել է «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ի հայտը:

9. «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 31.05.2017թ. ներկայացրած բողոքին կից ներկայացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի հարկային տեսչության կողմից 19.05.2017թ. տրված տեղեկանքը, համաձայն որի **«Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ն 21.03.2017թ.՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 555 000 ՀՀ դրամ դեբեդարյին մնացորդ:**

10. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 06.06.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/10158-17 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին, խնդրելով հայտնել, թե **«Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ն 21.03.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է արդյոք ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, թե՛ ոչ:**

11. Ի պատասխան Խորհրդի 06.06.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/10158-17 գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 14.06.2017թ. թիվ 1/6-1/20770-17 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղակատվական բազայում **21.03.2017թ. դրությամբ «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ն չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:**

12. Նիստի ժամանակ ԳԲԽ-ԱՄ-2017/07 բողոքը քննող Խորհրդի այն հարցին թե արդյոք Ընկերությունը վիճարկում է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Պատվիրատուին տրամադրված եզրակացությունը, ըստ որի՝ Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կազմել է՝ 91 557 850 ՀՀ դրամ, իսկ ակտիվների հաշվեկշռային արժեքը՝ 64 172 681 ՀՀ դրամ, ի պատասխան՝ Ընկերությունը հայտնել է, որ պարտավորությունների և ակտիվների մասով չի վիճարկում, քանի որ Ընկերությունում տեղի է ունեցել կանոնադրական կապիտալի ավելացում, սակայն դա Ընկերության կողմից չի արձանագրվել Ընկերության շահութահարկի հաշվետվություններում, որը սակայն հնարավորության դեպքում կարող է շտկվել Ընկերության կողմից:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ի 31.05.2017թ. բողոքը՝ կից ներկայացված փաստաթղթերով, ՀՀ պաշտպանության նախարարության 09.06.2017թ. թիվ ԴՎԱ/1756 գրությունը՝ կից փաստաթղթերով և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2017թ. թիվ 1/6-1/20770-17 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար **հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:**

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն սույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Սույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից **հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:**

Ընթացակարգի հրավերի 2.3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

«Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (**Հավելված 3.3**) այն մասին, որ հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Այսպիսով, «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/10-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՇՁԲ-7/31» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի մասնակցության **21.03.2017թ.** հայտի N 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ **հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով**, իսկ հայտի N 3.3 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ **հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:**

Պատվիրատուն, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին ուղղված Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 13.04.2017թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ի վերաբերյալ, որին ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 19.04.2017թ. ստացվել է եզրակացություն, համաձայն որի՝ «**Ֆիրմա Լիդա**» ՍՊԸ-ն **հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (21.03.2017թ.) ունի ժամկետանց հարկային պարտավորություն 343 398 ՀՀ դրամի չափով և հայտը ներկայացնելուն նախորդող (2016թ.) հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կազմել է՝ 91 557 850 ՀՀ դրամ, իսկ ակտիվների հաշվեկշռային արժեքը՝ 64 172 681 ՀՀ դրամ:**

Հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությունը, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն և հայտը ներկայացնելուն նախորդող (2016թ.) հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը գերազանցում է ակտիվների հաշվեկշռային արժեքը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 26.04.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1-րդ կետով կայացված որոշմամբ մերժել է «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ի հայտը:

Ընկերությունը 31.05.2017թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (21.03.2017թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություն, և ի հավաստումն իր պնդմանը, ներկայացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի հարկային տեսչության կողմից 19.05.2017թ. տրված տեղեկանքը, համաձայն որի Ընկերությունը 21.03.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունի դեբետային մնացորդ 555 000 ՀՀ դրամի չափով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 06.06.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/10158-17 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին, խնդրելով հայտնել, թե «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ն **21.03.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)** ունեցել է արդյոք ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, թե՛ ոչ:

Ի պատասխան Խորհրդի 06.06.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/10158-17 գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 14.06.2017թ. թիվ 1/6-1/20770-17 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղակատվական բազայում **21.03.2017թ. դրությամբ «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ն չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:**

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից ՀՀ գնումների բողոքարկման Խորհրդին ներկայացվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի հարկային տեսչության կողմից 19.05.2017թ. տրված տեղեկանքը, համաձայն որի Ընկերությունը 21.03.2017թ.-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, որը հաստատվել է նաև՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի՝ ի պատասխան Խորհրդի, 14.06.2017թ. թիվ 1/6-1/20770-17 գրությամբ:

Ինչ վերաբերվում է Ընկերության **«Ֆինանսական միջոցներ»** չափանիշին, ապա այս մասով Խորհուրդը արձանագրում է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 19.04.2017թ. Պատվիրատուին տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում **պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կազմել է՝ 91 557 850 ՀՀ դրամ, իսկ ակտիվների հաշվեկշռային արժեքը՝ 64 172 681 ՀՀ դրամ,** այսինքն՝ հաշվետու տարվա ընթացքում (2016թ.) Ընկերության պարտավորությունները գերազանցում են ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Ավելին, նիստի ժամանակ ԳԲԽ-ԱՄ-2017/07 բողոքը քննող Խորհրդի այն հարցին թե արդյոք Ընկերությունը վիճարկում է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Պատվիրատուին տրամադրված եզրակացությունը, ըստ որի՝ Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում **պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կազմել է՝ 91 557 850 ՀՀ դրամ, իսկ ակտիվների հաշվեկշռային արժեքը՝ 64 172 681 ՀՀ դրամ,** ի պատասխան՝ Ընկերությունը հայտնել է, որ պարտավորությունների և ակտիվների մասով չի վիճարկում, քանի որ Ընկերությունում տեղի է ունեցել կանոնադրական կապիտալի ավելացում, սակայն դա Ընկերության կողմից չի արձանագրվել Ընկերության շահութահարկի

հաշվետվություններում, որը սակայն հնարավորության դեպքում կարող է շտկվել
Ընկերության կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը, խորհուրդը գտնում է, որ «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ի
«Ֆինանսական միջոցներ» չափանիշը՝ սույն մասով չի բավարարում հրավերի
պահանջներին և Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ եթե ՀՀ ԿԱ պետական
եկամոտների կոմիտեի կողմից տրամադրված **եզրակացության արդյունքում մասնակցի
ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը
չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման արդյունքների հրապարակման
նիստում հանձնաժողովի որոշմամբ փվյալ մասնակցի հայտը մերժվում է:**

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ
հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ի 31.05.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական
կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ